

Դպրոցականների առարկայական օլիմպիադա

Մարզային փուլ

Հայ գրականություն-2018

/տևողությունը – 150 րոպե/

9-րդ դասարան

1.Ե՞րբ է Հովհաննես Թումանյանը գրել <<Սասունցի Դավիթ>> պոեմը. ի՞նչ նպատակով:

Նկարագրի՛ր Դավթին և Մելիքին՝ ըստ Թումանյանի պոեմի:

Հայ գրականության ո՞ր հերոսներին կարող ես համեմատել Դավթի հետ:

4մ.

2.Ո՞ր վիպասանն է օգտվել Փավստոս Բուզանդի <<Հայոց պատմությունից>>. ո՞ր հատվածն է օգտագործել. գրի՛ր վիպասանի անունը և ստեղծագործության վերնագիրը:

Գրի՛ր կարծիքդ այդ հատվածի մասին:

4մ.

3.Գրի՛ր հայ մեծերի՝ Սայաթ- Նովային բնութագրող ասույթներից (Թումանյան, Չարենց, Շիրազ, Կապուտիկյան և այլք):

Ի՞նչ է նշանակում աշուղ- բանաստեղծ: Շարունակի՛ր՝ Աշխարհումըս ախ չիմ քաշի...

(1 քառատող)

4մ.

4.Ո՞ր բանաստեղծներն են ծնվել նույն քաղաքում, սովորել նույն դպրոցում, ստեղծագործել նույն ժամանակաշրջանում: (XIX դար)

Գրի՛ր նրանց՝ քեզ ծանոթ ստեղծագործությունների մասին՝ յուրաքանչյուրից հիշատակելով 2-ական քառատող:

4մ.

5.Ո՞վ է Գաբրիել Սունդուկյանը. ի՞նչ գիտես նրա մասին: Ո՞վ է Սունդուկյանին անվանել <<Մեծ Պեպո>> և ի՞նչ է գրել այդ առիթով:

4մ.